


ՏՆՕՐԷՆ-ԽԱՐԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ քուրթիւն
պէտք է ուղղել առ

ՄԱՐԿՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար տեղի. ողջ դի. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներէ սարեկամ Գրանի 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ ալ գրութիւն եւ չի տրուիր :

ՄԵՐ ՎԵՑԱՄԱՍԵԱՆ

Փառնու իր վեցամսեայ առաջին շրջանը
կը բոլորէ այսօր : Այն հայաբնակ մեծ կեդ-
րոններուն մէջ, ինչպէս Պոլիս և Իսթանբուլ, ուր
հայ լրագրութիւնը երկար ժամանակներէ ի
վեր գոյութիւն ունի, նոր սկսուող թերթի մը
համար կէս-տարուան շարունակական գոյու-
թիւնը նշանակալից պարագայ մը չէ, թէեւ
այն տեղեր իսկ առկա չեն փախցուններ հան-
րութեան հետ երկու խօսք փոխանակելու :
Իսկ Եգիպտոսի մէջ պարագան տարբեր է .
հայ լրագրութեան համար բոլորովին կոյս գե-
տին մը գտանք մեր առջեւ, նոյնքան հետա-
քերտական նորութիւն մը պարզելու հարկին
մէջ գտնուելով մեր ազգայնոց համար որքան
եղաւ երկտրական թրամուէյը բնիկներուն
համար :

Եգիպտոսի հայերը կարգացող են ի ընդ-
է շատ մը տեղերու հայերէն աւելի կարգա-
ցող . ասիկայ կըսենք առանց զիջելու չորսոր-
թելու . աշխարհի ամեն անկիւնը ուր հայ
թերթ մը կը հրատարակուի, ըլլայ վճարմամբ
ըլլայ ձրի, մեծագոյն սպառումը այստեղ կը
գտնէ . գիրք, տետրակ, քերթուած, պատմու-
թիւն, վերջապէս մամուլէն արտադրուած ա-
մեն ինչ որ ազգային հանգամանք կը կրէ, նախ
և առաջ հոս կը հասնի ու կը լսուի : Միակ
թերթի կողմը, այս ընթերցասիրութեան ընդ-
հանուր հոսանքին մէջտեղ, Եգիպտոսի յա-
տուկ տեղական հայ թերթի մը չգոյութիւնն
էր զոր անարժանաբար փորձեցինք լրացու-
նել : Ու անկեղծապէս կըսենք թէ փորձը
քաջալերական եղաւ, նոյն իսկ մեր յուսացա-
ծէն աւելի : Հակառակ կարգ մը սահմանա-
փակ մտքի ու ընդարմացեալ սրտի տէր մար-
դիկներու սրճարանային գոռում գոչումին ու
անգիտակից հակառակութեան, որոնք չէին
կրնար հանդուրժել որ իրենց երեսին ըսուի
ամենէն տարրական ճշմարտութիւնն իսկ, օրի-
նակի համար թէ «երկու երկուք ալ կրնէ չորս»,
Եգիպտոսահայոց մեծամասնութիւնը համակիր
հանդիսացաւ մեզի :

Կը կրկնենք, հողը զոր պիտի մշակէինք
կոյս էր բոլորովին . ազգ. պաշտօնական մար-
մինը չէր ըմբռնել թէ ինչպէ՞ս քսանըջորս
ժամ չանցած կրնայ հրապարակ հանուիլ իր
մէկ որոշումը, ուրիշ մը կը զայրանար որ լրա-
գիրը իր հաշուական գործերուն կը միջամտէ,
գպրոցը, եկեղեցին, հոգաբարձուն, թաղա-

կանը, յանձնաժողովը, վերջապէս ամեն մէկը
իրենց չորս պատի մէջ մնալու սահմանուած
իրաւասութեանէն բան մը չէին ուզեր կորսն-
ցունել : Փառնու՝ առանց դարաւոր կարգ ու
սարքերը վեր ի վայր յեղաշրջող յաւակնու-
թեան՝ իր լապտերին տկար լոյսը ուղղեց քիչ
շատ ամեն կողմ, տեսնելու և ցցունելու հա-
մար հանրութեան թէ ինչ կանցնի կը դառ-
նայ : Դուռներն ինքնին բացուեցան բարե-
բաղդաբար, և Գահիրէի ու Ալեքսանդրիոյ
ազգ. մարմինները իրենք իսկ հաղորդակցու-
թիւն հաստատեցին մեր թերթին հետ փութ-
կոտուած մը որուն յարգը գիտենք պնա-
հատել : Գայով բարեբերութեան վերաբերող մեր քն-
նադատութիւններուն, որոնց համար ամենէն
գիւրամարս ձեւը, քմածինը, ժանտեղիւն ընտ-
րած ենք, անոնք աւելի ժպիտ առաջ բերին
քան զայրոյթ : Կը հաւատանք որ մարդ մը
կամ կին մը՝ խնդուներսով աւելի կրնայ
ուղղել իր թերթի մէկ կողմը, անգագալբար,
քան թէ բարկանալով ու գրգռուելով :

Միակ գանգատը զոր կը լսենք շարունակ
մեր ընթերցողներէն, բերանացի թէ գրաւոր,
թերթին փոքր ծաւալին կը վերաբերի զոր ըն-
դարձակուած տեսնել կը փափագին և մանա-
ւանդ շաբաթական երեքօրեայ հրատարակ-
ման վերածուած : Փառնուի տպարանական մի-
ջոցները ներելուն պէս առաջին աշխատութիւն-
նիս պիտի նուիրենք այդ փափագի իրագործ-
ման որ մեր ալ ծրագիրն է : Եթէ գիտնային
թէ ինչ գծուարին ճիգերով կազմակերպուե-
ցաւ այս լրագրական պղծիկ գործը, որ մեծ
վաճառատուն մը հաստատելէն աւելի ծան-
րութիւն ունէր, աւելի ներող ու աւելի համ-
բերող պիտի հանդիսանային անտարակոյս
Օր մը կը պատմենք այդ ամենը :

Կը յուսանք մեր երկրորդ վեցամսեան
բոլորել նոյնքան կանոնաւորութեամբ և աւե-
լի խնամեալ ու ճոխ ընծայելով թերթը որ-
քանով որ առաջինը աւարտեցինք :

Վերջացունելէ առաջ, շնորհակալութեան
հարկ մը ունինք մատուցանելիք, Եգիպտոսի
հայութեանէն զատ, արտասահմանի այն ազ-
գայնոց որոնք՝ մամուլի կատարելագործութեան
կեդրոնները գտնուելով՝ չի զլացան համակ-
րանք արտայայտել մեր թերթին, վասնզի թէ-
եւ պղծիկ, օտար չէր, իրենցն էր . և մաս-
նաւորապէս շնորհակալութիւն Ամերիկայի հա-
յաւնակ քանի մը քաղաքներուն որոնք այն-
քան հեռուէն բարեկամական ձեռք կը կար-
կառեն մեզի :

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԺԸ

Արտասահմանի հայ լրագրութիւնը վերջերս շատ
զրադեցաւ Օրմանեան Պատրիարքին անձովը և շարք
մը քննադատութիւններ հրատարակեց անոր պաշ-
տօնավարութեան մասին : Այդ քննադատականները
սակայն ամենամեծ մասամբ այնքան անամէջ և յա-
ճախ հայհոյալից են որ լրջափոխ ընթերցողին հե-
տաբերութիւնը գոհացնելու չեն կրնար ծառայել :
Իր վրայ մեծ պատասխանատուութիւն հրաւիրող
փափուկ պաշտօն մը, ինչպէս է Պատրիարքինը,
համբալ պոռոտախօսներու քննադատութեան առաւ-
կայ դառնալու չէ, սա պատճառաւ որ իրենց մտա-
ւոր կարողութեան վեր է նոյնօրինակ կարեւոր պաշ-
տօնավարութեան մը լազուկալոյսով հանգամանք
ներն ըմբռնել և ուսումնասիրել :

Մեր հասարակութեան մէկ մասին դատողու-
թեան համեմատ, Պատրիարք մը տղապէս ճանչ-
ցուելու համար պէտք է անպատճառ Դրան հետ
գէշ վարուի և յարաբերութիւնները ճշտման մէջ
պահէ, — նոյն իսկ երբ ատանկ ծայրայեղութեան
մը պէտք չի կայ :

Ասիկ տարբեր ընթացքի մը հետեւող Պատրի-
արքը չորսօրթ է, դաւաճան է :

Այս խմատով քննադատութիւնները ո՛չ միայն
պաշտօնի վրայ գտնուող անձնաւորութիւնը անտե-
ղի կերպով կը վիրաւորեն, այլեւ որեւէ օգտակար
արդիւնքի ալ չեն կրնար յանգիլ :

Քննադատութեան առարկայ եղող անձը այսպէս
թէ այնպէս օգտուելու է իր մասին եղած հրատա-
րակութիւններէն . առանց ատոր՝ քննադատական
մը իր կոչումին մէջ թերացած կըլլայ :

* * *

Օրմանեան Պատրիարք պաշտօնի գլուխ անցաւ
ազգային գործերու ամենէն տագնապայոյց մէկ շըր-
ջանին մէջ : Հայաստան արիւնջաւայ, հայ ժողովուր-
դը տնտեսապէս կործանած և բրիտանեայ Եւրո-
պայէն լքուած : Պէտք է խոստովանիլ որ իրերու
այդ կացութեան հանդէպ Պատրիարքին թունելիք
ընթացքը չափէն աւելի դժուարին և կացութիւնն
ալ շատ ու շատ փափուկ էր :

Մենք չենք կրնար Պատրիարք մը թեթեւօրէն
դատաւարուել իր ստացած պատուանշանին կամ
հրապարակ հանած այս կամ այն շրջաբերականին
համար : Քաղաքականութիւն ըստաւոր, զոր մենք
հայերս ամենէն քիչ կը հասկնանք, բան մըն է որ
յաճախ արտաքուստ աչքի չի գարներ . հետեւաբար
չենք կրնար հեռուէն հեռու գիտնալ ո՛րեւէ գործո-
ղութեան մը ներքին շարժառիթ : Պատրիարքը
իրաւունք ունի մեզմէ որոշ չափով համբերութիւն
սպասելու մինչեւ որ ինքն ալ ընելիլը գիտնայ և
իր քաղաքականութիւնը բաղեցնէ : Մենք շատ ան-
գամ կը մտածենք որ մեր անձէն դուրս ուրիշ ազ-
գասէր գոյութիւն չունի ու կը դատաւարուենք ամեն
անոնք որ մեզմէ տարբեր կը խորհին ու կը գործեն .
բարեբաղդաբար այս տեսութիւնը ուղիղ չէ, սակա-
ւ ի՞նչ վա՛յն էր եկեր Ազգին գլխուն :

* * *

Եւ սակայն , թուրքիոյ հետ բողոքականութիւն մը մշակուած ատեն , ճշմարտութիւն մը կայ զոր ինչպէս Հայոց Պատրիարքը նոյնպէս ամէն հայ պէտք չէ մտքէ հեռացնէ :

Մեզի համար հիմնական սխալ է մեր ազգային քաղաքականութիւնը վերջին տարիներու մէջ պատահած ինչ ինչ դէպքերու անյաջող հետեւանքներուն վրայ հիմնել ու այսպէս մէկ ծայրայեղութենէն նետուիլ ուրիշ ծայրայեղութեան մը գիրկը :

Կարգ մը պաշտօնողական գլուխներ մեր վերջին դժբախտութիւններէն բոլորովին յուսահատ և առանց անոնց ներքին պատճառներուն խորը թափանցելու չափ իմաստասիրող միտք ու կարողութիւն ունենալու , կը կարծեն թէ հայ ազգին փերկութիւնը այսուհետեւ միապետի մը քղաքականութիւնը և անոր օտարութիւնը ամէն ծոռի չորսմէ մեր չի գործած յանցանքներուն համար պաղատազօրն ներում ինքզինուն մէջ կը կայանայ :

Ազգային պաշտօնական մարմիններուն և անոնց նախագահին համար այսպէս մտածել և այս կերպ գործելը նոյնքան սխալ պիտի ըլլար որքան արդի հանդամանքներուն տակ մոռնալ թէ իրենք հպատակ ազգի մը միջնորդի դերը ստանձնած են Բ. Դրան և Պատրիարքարանի միջեւ :

Հիմայ որ , ըստ երեւութիւն , ջարդերու չըջանք անցած է , հարստահարող ու պատասխանատու տարրը անշուշտ կը գգայ թէ հայտնաբերած քաղաքականութիւնը մինչեւ ուրեքդուստր տարաւ գաղտնեց երկիրը : Այս պարագային մէջ , եթէ զըջացող մը , ներում խնդրելու պարտաւոր մէկը կայ՝ ոչ թէ մենք ենք , այլ մեր հարստահարչներն են :

Այս կացութիւնը պէտք է լաւ ըմբռնէ հայ ազգը . պէտք է լաւ ըմբռնեն մանաւանդ Ազգին և Բ. Դրան մէջտեղը միջնորդի դեր կատարող պաշտօնական մարմինները : Փախաբեկի է որ Պատրիարքի անձին մէջ տեսներ ոչ թէ յանցաւորի ձեւերով ստրուկ համակերպող մը , այլ աւելի իր իրաւունքներուն խորապէս գիտակից սղաւոր պահանջատէր մը :

Յիմարութիւն է մտածել թէ երբ պարտապահանջը կամովին ու խոնարհարար իր ամէն իրաւունքներէն ու պահանջներէն հրաժարի պարտաւորէր բացէն նուէր մը կընէ իրեն , մանաւանդ երբ ոյդ պարտաւորը թուրքիա կը կոչուի :

X

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

Ը .

ՍԱՄԱՐԻԱԿԱՆ ՇԻՔ ԵՐԻՏՐԱՍԱՐԴԷ

Քսանէն քանըհինգ տարու , բաց կարմիր ֆէս , ոլորուն պէխեր , շարաթը անգամ մը կածկուի :

Վաճառականի քեզիեհախար , ոսկերիչ և կամ մարտէն ապրանք կը հանէ :

Կիրակիէ կիրակի Բըթի-Շան կերթայ և գիշերը Բերա կանչընէ :

Տարին յիսուն երկու օր ունի իրեն համար . . . կիրակիները :

Մնացեալ օրերը մերենայ մըն է որ առողուն կանուխ տունէն դուրս կելլէ , մինչեւ իրիկուն եղան պէս կաշխատի և իրիկունը երկու գաւաթ գարեջուր կամ շիշ մը օդի կը կոնծէ թաղին զրօսարանին մէջ և տուն կերթայ , մանի մը կը կանչէ , մօրը հետ կը կուռի և կանուխիկ կը մտնէ անկողին :

Թաղին մէջ անպատճառ քոթէ մը ունի , հեզ պարկեշտ աղջիկ մը որուն հետ սիրահարութիւնը կը կայանայ տունին առջեւէն անցնիլ , պատահանէն վեր ահնարկ մը նետել և շատ մը նամակներ գրել . . . զորս երբէք չի զրկեր :

Հոտեղէն կը գործածէ և ամենէն անտանելիները . բաշուլի , ֆօրիօթիս , միւսի և մալերուն համար լավան . . . որ կը գնէ Մահմուտ-փոշայի պարսիկներէն սըրուալը 5 զուրուշի :

Կիրակի օրերը պատրաստ սիկառէթ կը գործածէ և բանի օրերը 50նոց քիւրիւն :

Ննջանեհակին մէջ պուռօ մը ունի որուն բանալիները երկիւղածօրէն քովը կը պահէ :

Պուռօյին մէջ կան . երեք հատ շապիկ և չորս հատ սփիկ , ամենքն ալ տարբեր ձեւով : Երեք հատ փողկապ՝ որոնց երկուքը թերմաշ և միւսը Բիկիմալիոնէն գնած է երկու տարի առաջ մէծիտիլէի մը և զոր տարին հազիւ 5-6 անգամ կը գործածէ : Երկու ձեռք

հագուստ Վարդանեանի քով շինուած , մէկը ամառ , ուսն և միւսը ձմեռուսն , բարտրսի մը , զոյգ մը ֆիլ s'kօս գուլպա . . . Բերա երթուլու համար :

Ամեն օրուան հագուստը ութ տարին անգամ մը կը փոխէ :

Ունի նաեւ պէխի սանտր մը , ծոցի փոքր հայելի մը , քանի մը աղջկան պատկերներ գորս չի ճանչնար , մետաքսի թաշկինակ մը կամ կարմիր , սիկառէթի տուփ մը , Պարոնեանի Զոզեք , զոյգ մը ձեռնոց , ժամացույցի կեղծ շղթայ մը , կազիկի տետրակ մը . Արեւելի այն թիւը որուն մէջ Սոմաթիայի թաղականներուն դէմ յօգուած մը կայ . աղջկան մագի տրճակ մը , «Վիր-ժին» , անուն ոտանաւորի մը ձեռագիր մէկ օրինակը , զոյգ մը քաշօ (թաղթի մէջ վաթթիւստ) և զոյգ մը կիրակնօրեայ սրարբին :

Այդ պուռօն իր միւղէն է , ամբողջ ինքնութիւնը , կեանքը և գոյութիւնը :

Կիրակի կէս օրին մօտ զիմայ կանցնի , Այնալըն կը ճաշէ և յետոյ մինչեւ Թարսիս կը քայլէ , Բըթի-Շան կը վերադառնայ և կամ Պոմանիին կը հանդիպի :

Իրիկունը մեղմով վարը կը կշտայնէ և անկից կերթայ Բօնքօրիս :

Ճրանքերէն չգիտնալուն կուզէ մաքուր տաճկերէն խօսիլ : Մեծ բան է եթէ Բօնքօրիայի մէջ կուռ մը չի հանէ և անկից կերթայ բարկութիւնը անցընել . . . չես զիտեր ուր :

Բարի տղայ , որ նկարագիր չունի , չի զգար , և կապիլ ինչպէս կապիլն բոյսերը արեւին հակողութեան ներքեւ :

Արողջ իտէյալն է երեք հարկը ոսկինոց աղջիկ մը գտնել :

Չինսորական կանոնաւորութեամբ քառորդ կը խաղայ և գործի օրերը թաշկինակ չի գործածեր :

ՌԱՏԱՄԵԾ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Չորեքշաբթի իրիկուն , Փարոսը մամուլին յանձնուէն ետք հասաւ Ռիւթէրի հետեւեալ հեռագիրը զոր նիւթապէս ժամանակ չի կար թերթին մէջ զետեղելու .

«Վիեննա , 16 նոյեմբ . — Աւստրիական Լոյտի Մէրսինի գործակալ Պ. Պրաձաւօրիի կամայական արտաքսման հետեւանօք , որ ամբաստանուած էր թէ այդ քաղաքի հայերուն հետ համախոհ է , Աւստրիա գոհացում պահանջեց Դուռնէն մինչեւ յառաջիկայ հինգշաբթիէն առաջ . ապա թէ ոչ , աւստրիական նաւատորմը պիտի ռմբակոծէ Մէրսինը » :

Շատ համբալ և անխորձ ըլլալու է մարդ , կարծելու համար թէ այս տեսակ սպառնալիք մը կրնար երբեք գործադրուիլ : Եւ արդարեւ երէկ առաւօտ երկրորդ հեռագիր մը կը հաղորդէր թէ թուրքիա պահանջուած գոհացումը տուած ըլլալով , Աւստրիա ետ կեցեր է իր սպառնալիքէն , որով «միջադէպը փակուեր է» : Դիւանագիտական աշխարհին մէջ ալ խաղերը կը վերջանան գրեթէ նոյն կերպով ինչպէս գօմէտիները թատերաբեմի վրայ :

Աւստրիական կառավարութեան պահանջած գոհացումն էր Ատանայի կուսակալին և Մէրսինի կառավարչին պաշտօնանկութիւնը , որոնք փոխուած ըլլալու են այս վայրկեան :

Ետքէն հասած Ռիւթէրի կրկին հեռագիրներ հաստատելով այս լուրը , սա մանրամասնութիւնը կաւեցունեն . «Սուլթանը հրամայեց կատարեալ գոհացում տալ Աւստրիոյ պահանջներուն , որոնց մէջ է նաեւ մէկ քաւորդ միլիոնի վճարումն ի հաշիւ պարտուց արեւելեան երկաթուղիներու , որ աւստրիական ձեռնարկութիւն մըն է » : Այս կերպով ուրեմն , Աւստրիա ո՛չ միայն քաղաքականապէս գոհացում կը գտնէ , այլ և դրամապէս

ալ կօգտուի այս պղտիկ միջադէպին բերամբար :

Եւրոպական նաւատորմերու անունը միայն ի՞նչ հրաշքներ գործելու կարող է , երբ որ և է մեծ Տէրութեան մը շահը պահանջէ :

—Թուրք կառավարութիւնը ամիոյներ կառուցանելու վրայ է սերպիական սահմանադրութիւն վրայ և Թօքաթի պահպան զօրքերուն թիւը կաւեցունէ :

—Կ. Պոլսէն նոյեմբեր 10 թուականով կը հեռագրեն Աթանա Հալապին , ի Բարիկ .

«Հայերուն կողմէ դաւադրական նոր փորձէ մը կը վախցուի : Կիրակի և երէկ , ոստիկանական արտասովոր միջոցներ ձեռք առնուած էին Պոլսոյ կողմը : Եղբունագատ ատուանը ձերբակալման հրամանագիր հանեց եւրեք հնչակեաններու դէմ որոնք փախած են » :

—Պէրլինի օամ : դեսպան Ղալիպ պէյ որ Կ. Պոլիս գացած էր , պաշտօնանկ եղեր է ու իրեն յաջորդեր է Պէլիւրատի դեսպան Թէվֆիկ փաշա : Այս յանկարծական պաշտօնանկութեան շարժառիթը սապէս կը պատմուի թէ Ղալիպ պէյ Պերլինէ մեկնած էր առանց արձակուրդ ստացած ըլլալու և սաստկապէս բողբոջած էր իր ամաթոշակներուն յապաղման դէմ : Կերեւայ թէ ինն ամէն ի վեր դրամ ստացած չէր :

—Պէրլինէն կը հաղորդեն նոյեմբ . 14 թուականով թէ Պանք Օթօմանի տեղոյն մասնաձիւղի տնօրէնն ու քննիչ մը փողոցին մէջտեղ դաշոյնի երեք հարուած ստացեր են : Այս յարձակումն ընողները թուրքեր են , կըսէ Բոօկրէ :

—Կ. Պոլսէն առնուած լուրերու նայելով , յոյնեթուրքական սահմանագիծի դժման միջադէպին յանձնաժողովի անդամոց մեծամասնութիւնը մերժեր է՝ նէձէքօս գիւղը ու չըջակայ հողերը Թուրքիոյ թողուելու առաջարկը : Հետեւաբար ինքիւրը կրնայ լուծուած նկատուիլ : Միւս կողմէ կը ծանուցուի թէ Դրան և Պանք Օթօմանի միջեւ սկսուած ելմտական բանակցութիւնները դժուարութեան կը բախին ի մասին առաջին մասնավրճարի գումարին . Պանքան կուզէ եղեր 60,000 ոսկի միայն տալ , մինչդեռ Դուռը 200,000 ոսկի կը պահանջէ : Յաջորդ վճարումները , որոնք մինչեւ 800,000 ոսկի պիտի հասնին , երկուքական ամիս պայմանաժամով պիտի կատարուին : Այս փոխառութիւն իբրեւ հիմ պիտի ծառայէ Թեսալիոյ պարպուելուն :

—Եթէ միապետական Գերմանիան զօրավարներ ու ծովակալներ փոխ կուտայ Թուրքիոյ , հանրապետական Ֆրանսան ոստիկանապետներ կը դնէ անոր տրամադրութեան ներքեւ : Բարիկի էֆէնդ օրաթերթի վերջին մէկ թիւին մէջ կը գտնենք «Օրուան Դէմքերը» խորագրին տակ ֆէսաւոր խոշոր մարդու մը պատկերն ու կենսագրութիւնը , Պ. Լըֆուլօն , նախկին գլխաւոր քննիչ բարիզեան ոստիկանութեան , որ օսմանեան ծառայութեան մէջ մօներ է էֆէնդ մասնաւորապէս կը շեշտէ սա պարագան թէ Պ. Լըֆուլօն իր քաւորդ դաւալաւորութեան ժամանակամիջոցին մէջ երկու հարկը ութսունըհինգ ձերբակալում կատարած է ի Ֆրանսա , գլխաւորաբար հոչակաւոր չարագործներու , թէ անիշխանականներու վերաբերեալ ամենէն կնճռոտ գոր-

ծերու քննութիւնն իրեն կը յանձնուէին և թէ ինքն իսկ եղած է Ռաֆայել ձերբակալողը :
Պ. Լըֆուօն կը յաջորդէ Պ. Պօնէնի, ուրիշ ֆրանսացի մը որ մինչեւ ցարդ կը ծառայէր թուրք սատիկանութեան մէջ, իբրեւ խորհրդական, և որ հիմակ հանդատեան կը կոչուի : Պ. Լըֆուօն ՅՅ տարեկան է եղեր և իր զաւակներէն մէկն ալ իր ձեռքին տակ կը ծառայէ օսմ. ոստիկանութեան մէջ, ի Կ. Պոլիս :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Ընթերցասիրաց ընկերութեան Գործադիր ժողովոյ անդամներէն Տիար Վառամ Գալփազ՝ ճեման պատճառաբանեալ հրաժարականով մը բոլորովին քաշուած է այդ ընկերութեան անդամակցութենէն :

Նոյնպէս հրաժարական մատուցած է Տիար Գ. Շանթունի :

Այսպէսով յիշեալ Գործադիր ժողովը գրեթէ լուծուած կը համարուի՝ իր չորս անդամներուն հրաժարումովը :

Մեր գաղթականներէն ընտանեաց տէր և պարկեշտ հայու մը, որ արհեստով սափրիչ է, դրամազուլս մը հայթայթելու նպատակաւ Տիկին Սրբուհի Պ. Կարապետեան 10 անգլիական ոսկւոյ հանգանակութիւն մը ըրած է հետևեալներէն .

Տիկին Եագուպ Արթին փաշա	2
Տէր Մամբէ քահանայ	2
Տիար Պ. Կարապետեան	2
„ Տ. Մկրտիչեան	2
„ Կ. Տէր Արուստեան	2

Անգլ. ոսկի 10

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր վեցամեան ներկայ թուով վերջացած ընթացքով, կազմարարութիւն անեն անոնց որոնք տակաւին իրենց բաժնեգիրն չեն վճարած թէ այլեւս թերթ չի պիտի զրկուի իրենց մինչեւ որ հին հաշիւներն չի մաքրեն :

ՏԵՂԱԿԱՆ

Լորտ Գրոմըր հինգշաբթի առաւօտ Ապտինի պալատին մէջ տեսակցութիւն մը ունեցաւ Բարձր. Խտիվին հետ :

— Պատերազմական նախարարութիւնը 40 հազար ոսկիի յաւելումով վարկ մը խընդրեր է կառավարութենէն՝ Սուտանի բանակին ծախքերուն համար :

— Պօղոս փաշա Նուպար նախընթաց օր ընդունուեցաւ Բարձր. Խտիվին կողմէ :

— Եգիպտոսի իտալական նախկին ընդհ. հիւպատոս Պ. տը Մարթինօ չորեքշաբթի գիշեր մեռաւ իր ընտանեացիներէն մէջ, Իսմայիլիէ : Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ հինգշաբթի մեծ հանդէսով :

— Բարձր. Խտիվին անձին նկատմամբ հրատարակուած արարեքն քերթուածի մը առթիւ բացուած դատական քննութիւնը աւարտած է : Հարցաքննիչ դատաւորին եղբայրացիութեան համեմատ՝ յանցաւոր նկատուած

են քերթուածն ստորագրողը, Ահմէտ Ֆուատ. Մուսթաֆա Լուիֆի որ կերեւայ թէ անոր բուն հեղինակն է. տպագրիչը, շէյխ Մուհամմէտ-էլ-Հիւսնի, և Սէյտ-էլ-Պաքրի որ գաղտնիքին թելադրիչն եղած է : Այս քննութեան արդիւնքը տեղեկագրով մը ներկայացուած է դատական խորհրդական Սըր Ճօն Աքօթի :

— Եգիպտոսի նախորդ նախարարապետ Բիազ փաշա նախընթաց օր անգլ. հիւպատոսարանն երթալով, տեսակցութիւն մը ունեցաւ Լորտ Գրոմըրի հետ :

— Զրոյց կը չըջի թէ եգիպտական կառավարութիւնը մտաւոր է 220,000 ոսկիի նոր փոխառութիւն մը խնդրել անգլ. կառավարութենէն՝ Սուտանի յառաջիկայ ճակատամարտի ծախքերուն համար. արդէն իսկ 780,000 ոսկիի պարտական ըլլալով այդ հաշուէն, Եգիպտոսի Անգլիոյ ունեցած պարտքը պիտի հասնի այս կերպով մէկ միլիոն ոսկիի :

— Տանտիկներ, ճաշարանապետը, փափկաճաշակները իրարանցումի մէջ են. հաւիթ թը ո՛չ միայն անսովոր կերպով սղած է Եգիպտոսի մէջ, այլ և հազուագիւտ դարձած :

Պատճառը երկու կերպով կը մեկնուի. նախ որ խումբ մը փաճառականներ միացած՝ Գահրիէի դուռները մարդ կեցուցած են, ներսերէն հասած հաւիթի մթերքը գնելու համար զոր օտար երկիր կը զրկեն մեծ շահեր իրականացունելով. յետոյ, վերին Եգիպտոսէն սպասուած նաւերը, որոնք մեծաքանակ հաւիթ կը բերեն, չեն հասնիր, Նեղոսի հոսանքներուն պատճառաւ :

ՇՈՒՄՈՒՄ

ԽԱՂ, ՄԻՇՏ ԽԱՂ

Կեանքը՝ Աստուծոյ աղի խաղը, մէկ ծայրէն մինչեւ միւսը խաղով յեցուն է :

Ներեցե՛ք ո՛ր հաստատեմ :

Նորածին տղան կաթնոտին սփռնեցուն հետ կը խաղայ :

Զորս սարեկան եղածին պէս, պիշիպ կը խաղայ եւ աստեղեկ սարս եղած ասեղնը՝ սպասուհիին . . . փեշերուն հետ :

Պոստիկ աղջկաները պէպէ՛ք կը խաղան, սասը սարեկանները միսաֆիր օյնի եւ յափահասները՝ վաշս եւ բոյսա :

Դրամասերը պօրսան կը խաղայ եւ կընիկէն ձանձրացողը՝ պէգիկ :

Ամեն մարդ ի՞նչ շատ բոռի կը խաղայ եւ Պենըտան՝ Լեպրեպիճի :

Այլը դուրսը եղող կիներ երկանը հազար ու մէկ խաղ կը խաղայ եւ . . . փոխադարձաբար :

Մեր ալքը կը խաղայ ամեն ուրախացի կամ ծխող պատանեւոր առօրէ եւ արտեսերիս կը խաղայ մեր պատաստեւորուն հանդէպ :

Վերջացնելու համար.

Աշխատեալ վաղը գիշեր «Սեզար Պոռնիս» պիտի խաղայ :

Ռ.

ՎԵՐՁԻՆ ՀՈՒԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆՏՈՆ, 19 Յոյեմբեր. — Մեծ հրդեհ մը ծագեցաւ միջնաբերդի Արտէրկէթ արուարձանին մէջ : Եղած ֆետար 125 միլիոն ֆրանքի կը հասնի : Մօր. դու. կորուստ չի կայ :

ՊԷՐԼԻՆ, 19 Յոյեմբեր. — Կրետէ գտնուող գերմանական զօրագունը կը մեկնի կղզիէն, թողնով այսպէս գերմանական մարտանաւն ուրիշ տեղ ծառայելու :

(Մ. Խ. — Այս հեռագիր ցոյց կուտայ թէ Գերմանիա անուղղակի կերպով կը քաշուի եւրոպական համաձայնութենէն՝ ի մասին Թուրքիոյ դործերուն : Արդէն իսկ Տէյլի Բրոնիէի Պէրլինի թղթակցին տեղեկութեանց նայելով, Վիլհելմ կայսեր կառավարութիւնը մտադիր է եղեր ձեռնադրէ մնալ նոյն իսկ Կրետէի կառավարչին ընտրութեան մէջ : Իրեն առաջարկուելիք ընտրելին պիտի ընդունի, բաւական է որ գինուորական մը ըլլայ) :

ԷՆՏԻՔԱԹԵՕՐ ԷԺԻՐՍԻԷՆ

Պարոն Մ. տի Ս. Միլի Եգիպտական ուղղ. ցոյցը (6րդ տարի) պիտի հրատարակուի յառաջիկայ Նոյեմբեր 30ին Ա. Բրէսի շքեղ տպագրութեամբ :

Մանուցումներու և տեղեկութիւններու համար գիմել թղթատարի միջոցաւ առ հրատարակչին մինչեւ Նոյեմբեր 20 :

ԿԻՆԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱՆՔՆԵՐԸ

Ընկերական միջավայրերու մէջ բարքերն այնքան կը տարբերին իրարմէ որքան անհատական դէմքերն :

Բայց ինչպէս մերթ դէմքերն ունին իրենց երեւոյթին մէջ իրարու նմանութիւններ, նոյնպէս ալ մերթ բարքերն ունին ինչպէս բարի նոյնպէս յոռի արարքներու մէջ, եթէ ոչ իրական գէթ տեսական նմանութիւններ :

Անհատներ կան որոնց համար ամուսնական կեանքը սիրոյ աղբիւր մը և երջանկութեան դրախտ մըն է, իսկ անհատներ կան որոյ համար ամուսնական կեանքն հեռի սիրոյ աղբիւր մ'ըլլալէ՝ կարծես դժոխային անտանելի լուծ մըն է :

«Փարոս»ի անցեալ թիւերէն մէկին մէջ «Հեռագրով ամուսնութիւն» պատմութեան իբր շարունակութիւն հաղորդած էինք թէլէֆօնով ամուսնութեան մը դէպքը : Այսօր եթէ թոյլ տաք ինձ, պիտի հաղորդեմ ձեզ անյարմար ամուսնութեան մը և կամ կիներու փոխանակութեան փորձանքները :

Ամերիկայի Թէնըսի նահանգին մէջ երկու գործաւորներ՝ մին Բոլոնացի, միւսն Հոլանտացի երկուքն ալ սերտ բարեկամ իրարու, կը գըտնուին ընտանեկան լաւ յարաբերութեան մը մէջ : Երկու բարեկամներն ալ Բագոսի տաճարին ջերմեանդ երկրպագուներ ըլլալով երեկոյները երբ տուն կը վերադառնան, գլուխն չափէն աւելի տաքցուցած կամ աւելի ճիշդն ըսելով խելքերնին գլուխներէն փախուցած կը ներկայանան իրենց կիներու : Կրնաք երեւակայել թէ խեղճ կիներն ինչե՛ր չէին քաշեր այս երկու ամենօրեայ ժամանակաւոր խելագարներու ձեռքէն, որոնց յարատեւ անտանելի ընթացքէն կանայք բոլորովին զզուած և դարձած էին և փոխադարձաբար իրենք եւս ծայրայեղ ատելութեամբ կը պախարակուէին իրենց էրեկներէն : Եթէ կայ սակայն զարմանալի կէտ մը այն ալ սա է թէ Բոլոնացին կը կարծէր թէ իր և կնոջը միջեւ տեղի ու-

ԼԵՍՍԻՆԷՍԻ ԺԵՆԻՆ

ԿԱՐԵԻՈՐ. Լեւսիյ s/ռ Ժէնիւն ԶԻ ՄԱՇԵՑՆԵՐ

Միակ ներկայացուցիչ յնգիպսոս

Կ. Վ. ԵԿԱՒԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Գանիրէ. ՊԱԶԱՐ ՄՈՒՐՈՒՐ 12—24

A black and white woodcut-style illustration of a woman's head and shoulders. She has voluminous, curly hair. On her right cheek, there is a large, circular clock face with a winding stem-wind mechanism on the left side. She is holding a book or a large sheet of paper in front of her chest. The illustration is signed 'W. H. P.' in the lower right corner.

Դժմեցէք ՍԵՆՎԱ-

ՃԵՂՆԻ Կորուհուս

տառ *Մթերանոցն* ի

Խան Խալիլ Կոչոյ
(Թ. 11 1880 թ. 1. 3)

(Ոսկերչաց շուկան)
Ճեւարնիւ մեքենայէն

1/29 : Սեյվանեան փա

ՀԱՌԱՄԱՐՈՒՆՆ ԵՐ ՊՈԼՆ

սոյ հրապարակի վրայ

մեծ համբուռ մը կը

վայելէր արդէն, իւր

ապրանայ ընտրութեամբը ու գնոց անկրկնի աժա-
նութեամբը, վերջերս բոլորովին հոս փոխադրուած

Բոլորնացին այն համոզումն ունէր որ եթէ
իր կնոջ փոխարէն Հոլանտացի կինն եւլած
ըլլար իրենը՝ ընտանեկան այդ զգուշի կոխ-
ներէն զերծ պիտի ըլլար և Հոլանտացին ալ
փոխադարձաբար :

Օր մը ըստ սովորութեան երբ կերթան
Բագոսի տաճարն իրենց նուիրական պաշտօնը
կատարելու, Բագոսի աներեւոյթ հոգին խոր-
հուրդ կուտայ երկու տաք գլուխ բարեկամ
ներուն՝ բոլորովին հրաժարել իրենց կլներէն :
Բայց ինդիր էր թէ երբ տուն վերադառնա-
լին ի՞նչ պիտի ընէին առանց կնկան :

Այս մասին Բագոս կրկին խորհուրդ կուտայ թէ քանի որ Բոլոնացիին աւելի համակիր և գաղափարակից կը գտնուէ Հոլանտացւոյն կնոջ և փոխադարձաբար Հոլանտացիին Բոլոնացիին կնոջ, աւելի լաւ կընեն կիներնին փոխելով, և այն ատեն այլ եւս տեղի չէր մնար ընտանեկան անկարգ վէճերու և կռիւներու : Այլ ասոր ըսելիք չմնաց կըսեն, և կատարելապէս կը համաձայնին իրարու հետ : Խնդիրը կը մնար երկու գինեւորներու կանանց հաճութեան : Երբ կառաջարկուի անոնց, կիներն հաճութեամբ կընդունին պայմանը : Այսպէս, կիներու փոխանակութիւնը տեղի կունենայ որով տիկին Բօլոնացիին կըլլայ տիկին Հոլանտացի և տիկին Հոլանտացիին ալ կըլլայ տիկին Բօլոնացի :

Երկու բարեկամները, կինեբու այս փոփոխանակութենէ վերջ ժամանակ մը անդորր կապրին, սակայն երկար չի տեւեր այս Բօլժնացին մի քանի ամիս վերջ կը սկսի իրնոր կինը նեղել. կինը կը համբերէ ժամանակ մը: Բայց վերջապէս համբերութիւնը կը հատնի և կըսուի ինքի դէմ դնել էրկանը. ընտանեկան այս խռովութիւնը կը շարունակուին ամբողջ երկու տարի. Բօլժնացին զգուշելով իւր այս վերջին կնոջ ընթացքէն և միանգամայն զղջալով իւր կինը փոխած ըլլալու սակարկութեան իրականացումէն, կը դիմէ իւր բարեկամին և կըսէ. բարեկամ, ես զղջացի որ կինս փոխեցի քու կինիդ հետ: Ես ասոր հետ հիմա չեմ կրնար ապրիլ, շարունակ կռիւ կընէ հետս տուր իմ կինս և ա՛ռ քու կինդ: Հո՛ւ լանտացին կը պատասխանէ թէ ինք դո՛ւ երկու ներկայ կնոյմէն և չուզեր զայն ձգել ցոյ՛ս չափ իրարու դէմ դժգոհութիւն մը չունին: Ետ տալու կամ չտալու խնդրով երկու բարեկամներու մէջտեղ վէճը կը մեծնայ, յուզումը կը սաստկանայ և խնդիրը կիյնայ դատարան: Ներու մեծին:

Հեռաբերերի եղանք գիտնալու թէ արդ-
եօք ամերիկեան արդարասէր դատաւոր-
ներն ինչ վճիռ պիտի արձակէին այս տարօ-
րինակ դատի խնդրոյն մէջ :

Դժբաղդաբար արդէն տոմսերնիս առած էինք Նիակարաի հիւպանչ ջրվէժի վերջին այցելութիւն մը եւս տալու, որով զրկուեցանք այս եզական դատին ներկայ գտնուելու փափագներնուս իրականացումէն :

ՄՓԻՆԿՄ

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN
ՏԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ յԵՐԱԳԻ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 փետրուար 1897

ԳՄՀԻՐԻԼՆ ԱՂԵՔՑԱՆԳՐԻՈՅ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		խառն 1,2,3 հգ.	սմ նիւթ. 1,2,3 հգ.	կէս ուղ. 1,2,3 հգ.	սմ նիւթ. 1,2,3 հգ.	էքսորէս 1, 2 հգ.	սմ նիւթ. 1,2,3 հգ.	էքսորէս 1, 2 հգ.	սմ նիւթիւս 1 2 3 կորդ	
		առտ.	առտ.	առտ.	առտ.	առտ.	երեկ.	երեկ.	երեկ.	երեկ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնէա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	առտ. 12 35	
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	8 32	1 44
	մեկ.	11 48	6 —	8 34	1 15	11 —	6 26	6 11	9 30	1 54
		երեկոյ			երեկ.					
Տաճանհուր	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
						երեկոյ				
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԷ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		օմ նիսյ. 1,2,3 կգ.	կէս ուղ. 1,2,3 կգ.	օմ նիսյ. 1,2,3 կգ.	էրբորէս 1 2 կգ.	խառն	օմ նիսյ. 1,2,3 կգ.	էրբորէս 1 2 կգ.	օմ նիսյալս 1 2 3 կարգ	
		առտ.	առտ.	առտ.	առտ.	առտ.	երեկ.	երեկ.	երեկ.	երեկ.
Աղեբաանդրիա	մեկ.	—	7 30	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանկուր	»	—	8 6	8 58	10 2	էրեկ. 12 14	4 13	5 15	8 6	առտ. 1 9
Թանթա)	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնէա)	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՂԻՐԷ-ՍԻՒԷԶ

ՊԷՆԶԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻՒԷԶ-ԳԱՅԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	Ա.Ա.Ա.Ս	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	Ա.Ա.Ա.Ս	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50
		Երեկոյ			—
Պէնէա)	ժամ.	12 28	» կայարան	»	3 30
)	մեկ.	12 33			Երեկոյ
			Իսթաթլիա	»	1 20
Զակաղիկ }	ժամ.	8 54			7 5
)	մեկ.	9 4	Զակաղիկ)	ժամ.	3 7
		առտ.	)	մեկ.	8 53
Իսթաթլիա	մեկ.	1 —			9 3
Սիւէզ կայարան	ժամ.	5 —	Պէնէա }	ժամ.	4 13
			)	մեկ.	9 47
Տօք (բարափ)	ժամ.	6 55			9 4
			Գահիրէ	ժամ.	5 5
					10 35